



Աշխատանքի նկարագրություն`

<Յայբիզնեսբանկ> ՓԲԸ-ն փնտրում է **Չանգերի կենտրոնի մասնագետի**, ով սերտորեն կաշխատի թիմի այլ անդամների հետ` մեր հաճախորդներին հիանալի ծառայություններ մատուցելու համար` պատասխանելով հարցերին, կարգավորելով բողոքները և շտկելով բանկի պրոդուկտների և ծառայությունների հետ կապված խնդիրները:

Անհրաժեշտ հմտություններ`

- Բարձրագույն կրթություն
- Չաճախորդներին ակտիվ լսելու, բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ
- Չաճախորդների ներգրավման և վաճառքի առաջադեմ հմտություններ
- Արագ կողմնորոշվելու, բանակցելու հմտություններ
- Ժամանակի կառավարման և որոշումներ կայացնելու հմտություններ
- Թիմում աշխատելու հմտություն
- Յայերեն լեզվի գերազանց իմացություն (գրավոր և բանավոր)
- Ռուսերեն կամ անգլերեն լեզուների գերազանց իմացություն (1 լեզվի իմացությունը պարտադիր է)
- Ֆինանսա-բանկային համակարգում աշխատանքային փորձը ցանկալի է
- Չամակարգչային գիտելիքներ (ՅԾ բանկ համակարգի իմացությունը կդիտվի որպես առավելություն)

Աշխատանքային պարտականություններ`

- Բանկի հաճախորդների և պոտենցիալ հաճախորդների տեղեկատվական աջակցություն գանգերի և առցանց հարթակների միջոցով
- Չաճախորդներին հասանելի համակարգերի օգտագործման հետ կապված տեխնիկական աջակցության իրականացում
- Նոր հաճախորդների ներգրավում և գործող հաճախորդների պահպանում
- Մուտքային գանգերի միջոցով խաչաձև վաճառքների իրականացում
- Վաճառքների խթանման նպատակով ելքային հեռախոսազանգերի իրականացում

- Հաճախորդների խնդիրների բացահայտում, ինչպես նաև առաջադրված և չլուծված հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանցում համապատասխան բաժիններ կամ անմիջական ղեկավարին
- Կենտրոնում այլ ընթացիկ աշխատանքների կատարում

Հարցազրույցի փուլերը

- **Առաջին փուլը**- դիմորդը հանդիպելու է Տաղանդների հավաքագրման մասնագետի հետ: Հարցազրույցավարը հարցեր կտա դիմորդի փորձի և հմտությունների վերաբերյալ, ինչպես նաև համառոտ նկարագրում հաստիքի պարտականությունների և բաժնի մասին: Տևողությունը՝ 15 րոպե:
- **Երկրորդ փուլը**- դիմորդը հանդիպելու է Տարածքային զարգացման դեպարտամենտի Դիմում-բողոքների և զանգերի համակարգման կենտրոնի ղեկավարի և տաղանդների հավաքագրման մասնագետի հետ: Մասնագիտական գիտելիքների ստուգում, բանավոր հարցերի շուրջ: Տևողությունը՝ 1 ժամ:
- **Երրորդ փուլը**- աշխատանքի առաջարկի փուլ, որի ընթացքում լինելու է քննարկում, աշխատավաճի, աշխատանքային գրաֆիկի, ինչպես նաև հաստիքի պարտականությունների մասին:

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 11.03.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "Call Centre Specialist – Name, Surname":